

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հոկտեմբերի 20-ին, կիրակի օր, Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ եկեղեցում քահանա ձեռնադրվեց բարեշնորհ Հովհաննես սարկավագ Դանիելյանը, գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի շնորհաբաշխությամբ։

Արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Դանեիլյանը ծնվել է 1932 թվականին Լենինականում։ Նրա ծնողները 1915 թվականին գաղթել են Մուշից և հաստատվել Հայրենիքում։

1939 թվականին Հովհաննեսը իր ծնողների հետ տեղափոխվում է Թբիլիսի, ուր և ստանում է իր նախնական կրթությունը։ 1948 թվականին ավարտելով միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանը անցնում է աշխատանքի։

Հովհաննեսը վաղ պատանեկան տարիքից սեր է ունեցել դեպի քահանայական սուրբ ասպարեզը։

1953 թվականին նա ընդունվում է Հոգևոր Ճեմարան՝ իր ուսումը շարունակելու և հոգևորական դառնալու հաստատ որոշումով։

Հովհաննեսը Ճեմարանում շատ լավ է սովորում, խորանում է գիտելիքների մեջ և իր աշխիվ վարք ու բարքով, ջանասիրությամբ և համեստությամբ գրավում է բոլորի համակրանքը։

1954 թվականի փետրվարին նա ստանում է դպրության շորս աստիճանները, իսկ 1955 թվականի դեկտեմբերին ձեռնադրվում է սարկավագ։ Նա իր ուսումը շարունակում է Հոգևոր Ճեմարանի լսարանական բաժնում մինչև 1957 թվականի ուսումնական տարվա վախճանը։

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ և հրամանով 1957 թվականի հոկտեմբերի 20-ին նա ձեռնադրվում է քահանա։

Արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Դանիելյանը մեր Ճեմարանի լավագույն ուսանողներից մեկն է, պատրաստված, աշխիվ, համեստ, հավատավոր և անձնվեր։

Նորընծա Տ. Հովհաննես քահանան քահանայագործելու է Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցում։

Շնորհավորելով նորընծային, ցանկանում ենք նրան միաժամանակ արդյունավետ գործունեություն իր նոր ասպարեզում՝ հօգուտ մեր Ս. Եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի։